

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՀԱՐԳ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Երևան

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սրտանց շնորհավորում ենք Ձեզ և մեր հայրենի կառավարությունը՝ մեր Մայր Հայրենիքի վերածննդյան վաթսունամյակի սեմին, ամենաջերմ մաղթանքով, որ նաև հետ այսու երկար ու անհատնում տարիներ մեր մայր երկիրը ապրի ու աճի ու ծաղկի խաղաղության մեջ՝ սովետական եղբայր ժողովուրդների մեծ միության մեջ, հերջանկություն մեր ազգի բոլոր զավակների, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Ձեզ և ձեր բոլոր մեծարգո գործակիցներին ցանկանում ենք անսպառ շինարար եռանդ ձեր հայրենաշեն առաքելության ճանապարհին:

Ամենախորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
29 նոյեմբեր 1980 թ.